ՆԱԽԱԳԻԾ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված տարբերակ

Կ-196-19.06.2019-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20-րդ հոդվածի՝
15.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«15.2 ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին, (իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկները) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա)	բազային տուրքի 60-ապատիկի չափով

Հոդված 2. 20-րդ հոդվածի 15.3-րդ կետում ««ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով» բառերը փոխարինել ««Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով» բառերով:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի տասից:

Տեղեկանք

15.2.	ԱՏԳ ԱԱ ***7201***, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին, ***(իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկները)*** դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում, ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ***(բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204)*** ապրանքների վրա)	բազային տուրքի ~~80-~~ ***60-*** ապատիկի չափով
15.3.	ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106 00 100, 8107 30 000, 8108 30 000, 8109 30 000, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 52 000, 8112 92 200, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և ~~«ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով~~ «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման համար	բազային տուրքի 100-ապատիկի չափով

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Կ-196-19.06.2019-ՏՀ-011/1) ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 1-ին հոդվածի ցանկի 2-րդ սյունակում	«80» թիվը փոխարինել «60» թվով	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է:
2.	ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Բաբկեն Թունյան	Նախագծի 3-րդ հոդված	Շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի սեպտեմբերի տասից»:	Ընդունվել է: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	Ընդունվել է: